

3583

14 JUL 2009

Ի ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԼՏԵՏԻՆ ԿԻՑ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԲՅՈՒՐՈ

15
5-16

Ձեռագրի իրավունքով

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԿՈՒՐՍ I

1930

ՍՈՍԱԶԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 4.

Գ. ԵՂԻԼՅԱՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բ Ո Վ Ս Ն Դ Ս Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

1. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՍՍՈՑԻԱՑԻԱ

I. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Ուղեղի տպավորվողությունը.
2. Ուղեղի սլաստիկականությունը.
3. Ռեպրոդուկցիա (վերարտադրություն).
4. Հիշողության հատկանիշները.
 - ա) հիշողության հարազատությունը.
 - բ) հիշողության ծավալը.
 - գ) հիշողության տեղումը.
 - դ) հիշողության արագությունը.
 - ե) հիշողության բազմակողմանիությունը և միակողմանիությունը.



15586-52

1131

- 5. Հիշողության տեսակները.
- 6. Հիշողության գաղափարները.
- 7. Մոռացումն.
- 8. Լավ հիշելու պահիտեսիսիկան.

II. ԱՍՍՈՑԻԱՑԻԱ. (ՉՈՒԳՈՐԴՈՒՄԸ)

- 1. Առընթերության ասոցիացիա.
- 2. Նմանության ասոցիացիա.
- 3. Յենթագիտակից ասոցիացիա.
- 4. Ազատ և պայմանավորված ասոցիացիա.
- 5. Արտաֆին և ներֆին ասոցիացիա.
- 6. Զուգորդման սկիզբը և ընթացքը.
- 7. Պերսեվերացիա.

Աղբյուրներ.

КОРНИЛОВ: Учебник психологии. 7-е изд. VIП—X.
ЛАЗУРСКИЙ: Психология. 7-е изд. VII, XI, XII.

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՍՍՈՑԻԱՑԻԱ

1. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Անցյալում կատարած շարժումներն այժմ կարող են կրկնվել նույն կերպ, առանց անցյալի ֆիզիքական զրգիւնների նույն դասավորութեան, անցյալի հոգեկան գիտակից բովանդակութեաններն այժմ կարող են վերապրվել այնպես, վոր գիտակցողն իմանա, վոր դրանց համապատասխան սկզբնական ապրումները տեղի յեն ունեցել անցյալում: Հին պրոցեսները այսպիսի վերարտադրութեանը հնարավոր և դառնում ուղեղի հետևյալ հատկանիշների շնորհիվ:

1. Ուղեղի տպավորվողությունը (գրգռականությունը): Որդանիցմը փոխհարաբերության մեջ և շրջապատի հետ. այդ փոխհարաբերության հիմքում գրված և ուղեղի տպավորվողությունը, այսինքն՝ ուղեղը գրգռից կամ հենց մարդու օրգանիզմից յեկող զրգիւններից աղբվում և, ինքը վորոշ փոփոխութեանների յե յենթարկվում, վորի հետևանքով և լ տեղի յեն ունենում հոգեկան նոր ապրումներ և այլ և այլ ունակցիաներ: Այս նոր ապրումները դառնում են վերհիշման մատերիսը:

2. Ուղեղի պլաստիկականությունը

(Ամրապնդումը)

Ուղեղն ունի մի յերկրորդ հատկութեան, վորով նրա սարուկտուքայի (կառուցվածքի) այն փոփոխութեանները, վոր առաջացել են տրտալորվողութեան պատճառով, ամրապնդվում, մնում են. այդ հատկութեանն ասում են նաև պլաստիկականություն, այսինքն՝ արտաքին գրգիւնների ազդեցութեամբ տեղի ունեցած փոփոխութեանները պահպանելու—ամրապնդելու ընդունակություն:

Ուղեղի պլաստիկականությունը ֆիզիքական այն հիմնական օրենքի մասնակի, բայց ավելի բարձր, արտահայտութեանն և, ըստ վորի առարկայի մասնիկների այն շղթայակցութեանը, վոր դուրս և հանվելիք նախկին վիճակից՝ նոր վիճակի մեջ գրվելով, ձգտում և պահպանելիք այդ նոր վիճակը: Որինակ յերկար ժամանակ վոլորած պահած թուղթը կամ շորը պահպանում են իրենց ստացած նոր ձևվը, նույնիսկ յեթև վոլորած վիճակից ազատում ենք, թուղթը նորից վոլորելիս ավելի հեշտ և վոլորվում:

Նոր վիճակի այսպիսի ամրապնդմամբ ավելի աչքի յե ընկնում օրգանական մատերիան, վորը նուրբ մոլեկուլյար փոփոխութեանների յե յենթարկվում արտաքին զրգիւնների ազդեցութեամբ: Այդ փոփոխութեանները հարթում են գալիք նման զրգիւնների ճանապարհները, դալիք զրգիւններն այդ հարթված ճանապարհների պատճառով ավելի հեշտ և պրոցեսներ տալիս և վորոշ ուղղություն են ստանում: Ճանապարհները հարթվում են վոր յե միանգամից, այլ աստիճանաբար, նման զրգիւնների կրկնութեանների շնորհիվ:

Նշանակում և, նոր զրգիւններն ազդելով ուղեղի վրա, անհետ չեն կորչում, այլ վորոշ հետքեր են թողնում նրա մեջ, վորոնք կարող են մնալ կարճ կամ շատ յերկար ժամանակ: Ի՞նչ հետքեր են դրանք, ի՞նչպես են մնում, ի՞նչ բնույթ ունեն նրանք մինչև նորից վերարտադրվելը, այս հարցերը պարզված չեն գիտութեան կողմից:

Գոյութեան ունեն հետևյալ յենթաղբում յեանները:

ա) Նոր զրգիւց հետո ուղեղի վորոշ տեղի բջիջները մնում են շարժման վիճակի մեջ, վորն աստիճանաբար թուլանում և և յերբ վորոշ պեպքերում այդ տատանումներն ուժեղանում են և մոտենում իրենց սկզբնական շարժումները ուժին, գիտակցութեան մեջ արթնանում են հին զրգիւններին նման ապրումներ, ավելի փոքր ուժեղությունամբ (մտապասկեր): Այս կարծիքը քիչ հավանական և, վորովհետև այդ պեպքում պեպք և ընդունել, վոր ուղեղի ներգլխան անպտուղ կերպով վաստնվում և: բ) Վժմանք կլ ընդունում են, վոր զրգիւն ուղեղի մեջ հետքեր և

1040

Թողնում եւ այն կարծիքին են, վոր ուղեղի այդ հետքերն իրենց բնույթով նման են զըզապատճառ զըզոին, սա յեւ ճիշտ չե, վորովհետեւ նոր ապավորութիւնները եւ ուղեղի մեջ մնացած փոփոխութիւններն իրարից տարբեր են: Գ) Այլիկ հավանական եւ այն կարծիքը, ըստ վորի ուղեղի մեջ մնում է միայն նախատրամադրութիւն (ПРОДРАСЧОЛЖЕНИЕ), փորն փոշ ալլ ինչ ե, յեթե փոշ նյարդային հյուսվածքի ընդունակութիւնն իր մեջ պահպանելու այն փոփոխութիւնները, փորոնք առաջանում են զըզոնների աղեղեղութեամբ, փորով ստեղծվում են նպաստաւոր պայմաններ միեւնոյն զըզոի կրկնութեան համար: Այլ խոսքով ասած, զըզոն, վոր առաջ տեղի յե ունեցել, կարող ե այդ նախատրամադրութեան (կամ հակման, կամ հետքի) շնորհիվ տեղի ունենալ մեծ հեշտութեամբ եւ արագութեամբ: Ուղեղի մեջ մտանդակներն չեն մնում, այլ նրա մեջ տեղի ունեցած փորոշ փոփոխութիւնները, այսինքն՝ մտապատկերի առաջացման համար մի փորոշ պայման: Վերջնական կարծիք դեռ գոյութիւնն չունի:

Գրգիտները այս ամբողջումը հսկայական նշանակութիւն ունի որպանիզմի համար, փորովհետեւ այդ կերպ կուտակվում է անցյալի փորձը, փորն ոգտագործվում է ներկա եւ գալիք կյանքի համար, առանց անցյալի փորձի պահպանման որպանիզմը չէր կարող հարմարվել շրջապատին: Գրգիտների հետքերի ամբողջումը հոգեբանական տերմինով կոչվում է մտապահումն:

3. Ռեպրոդուկցիա—վերարտադրութիւն կամ մտաբերումն

Ամբողջման կամ մտապահման հետ միասին, այլիկ ճիշտ նրա հետեւանքով, ուղեղը մի հատկութիւնն էս ունի, փորով ամբողջված հետքերը օկարողուկցիայի յեն յենթարկվում, այսինքն՝ վերարտադրվում, նորոգվում, մտաբերվում, վերհիշվում են՝ դառնալով մտապատկեր, ճանաչված առարկա, ծանոթ շարժում—գործողութիւնն եւ այլն: Ուղեղի մեջ մնացած հետքը—նախատրամադրութիւնն այսպիսի հետեւանք ե տալիս, յերբ ուղեղի վրա ազդում է մի նոր զըզոն, փորն իր բնույթով նման է այն զըզոին, վորն անցյալում տեղի յե ունեցել եւ ուղեղի մեջ հետք ե թողել: Ռեբեմն արտաքին նոր նման զըզոնը պատճառ ե դառնում հետքի ուժեղացման ե հոգեկան յերևույթ տալուն: Հետքերը կարող են ուժեղանալ ե նկատելի հոգեբանական հետեւանքներ տալ նաեւ ասոցիացիայի պատճառով: Նույն ժամանակում տեղի ունեցող զըզոնների հետքերը կապակցվում, զուգորդվում են իրար հետ ե այսպիսով կազմում հետքերի շղթաներ: Ապագայում, յերբ զըզոնում է մի հետք առանց նոր զըզոնների,

զըզոնում են նաեւ այդ հետքի հետ կապված մյուս հետքերը: Ասոցիացիայի այս յերեվույթի մասին հետո այլիկ մանրամասն խոսք կլինի:

Ամբողջվելու (մտապահելու) ե վերարտադրվելու (մտաբերելու) այս պրոցեսները միասին առնված կոչվում է հիշողութիւն:

4. Հիշողութիւնի հատկանիշները

Ա) Հիշողութիւնի հարազատութիւնը.—Վորքան ել լայն պայմաններ ստեղծված լինեն, անհնար ե հիշելիքն այնպես ճշգրիտ ե մանրամասն վերարտադրել, ինչպես առաջին անգամ նույն բանն ըմբռնածը: 240 ուսանողից յուրց ե տրվում, 20 վայրկյան տեւողութեամբ մի նկար, միայն վեց հոգի յեն ճիշտ ե մանրամասն նկարագրում առարկան, մյուսները տալիս են անհավասարիմ նկարագիր:

Ժամանակի ընթացքում ըմբռնածից վորոշ բաներ մոռացվում են, վորոշ բաներ այլապես, հենց նորն ըմբռնելիս ամեն մեկն տարբեր ե ըմբռնում, տարբեր կողմերի վրա յե ուշադրութիւն դարձնում՝ համաձայն իր ուրույն ապագայիցիաների:

Հիշվածի այս մասամբ անհարազատութիւնը կամ անճշգրտութիւնն ողտակար ե, վորովհետեւ որպանիզմի համար անհրաժեշտ չե ամեն բան հիշել ե ամեն հիշած բան ել ամեն մի կողմով լայն հիշել, այլ հիշվում է մի բանից այն մասերը, վորոնք հատուկ ողտակարութիւնն ունեն որպանիզմի համար:

Ճիշտ ու մանրամասն ե անճիշտ հիշելու տեսակետից մարդիկ զգալի կերպով տարբերվում են իրարից: Կան արտակարգ չափերով ճիշտ հիշող անձնավորութիւններ, որինակ, Մոցարտը 14 տարեկան հասակում առաջին անգամ մի բարդ կառուցվածքի յերաժշտութիւնն ե լսում ե հետո ամբողջը ձայնագրում ճիշտ: Մի նկարիչ Ռուբենսի մի բարդ նկարի նայելուց հետո, նույնը հիշողութիւնից նկարում ե այնպես, վոր դժվար ե լինում վորոշել, վորն ե բնագիրը, վորը պատճեն: Մանկատան մի կառավարչուհի 30 յերեխայի սպիտակեղենը լվանալուց ե հարթուկելուց հետո, հտտով վորոշում է, թե վոր չարը վոր յերեխայինն է: Բայց այս նույն մարդիկ այլ խնդիրներում նույն տեսակ ճշգրիտ հիշողութիւնն չունեն:

Արտակարգ զեպքերը մի կողմ թողնելով, պիտի ասենք, վոր նախկին ապրումները վերարտադրելիս, այնպէս ձեւափոխութիւններ են մտնում, վորով վերհիշվածը բավականին տարբերվում է նախկին—իսկական ապրումից, հենց զրա համար ել վորոշ հոգեբաններ ասում են, վոր ճիշտ վերարտադրութիւնը (մանավանդ խոսելիս) վո՛ր թե սոյոքական, այլ բացառիկ յերևույթ է: Պետք ե ծանոթանալ այն հանդա-

մանքները հետ, վորոնք խեղաթյուրում են նախկին փորձի սեպտ-
դուկցիան (մտաբերումը) :

ա) Մի բան ճիշտ կամ սխալ է վերարտադրվում, նայած թե ըմբռո-
նողն այդ բանի վոր մասերի վրա յե ուշադրությունն դարձրել է վոր
մասերն անուշադրության մասնել, ըմբռնման ժամանակ ինչ ապակեցեպ-
ցիայի ազդեցության տակ հոգեկան ինչ վիճակի մեջ է յեղել : Հենց ըմ-
բռնումն ինքը մասամբ սուբյեկտիվ հանգամանք ունի, վորովհետև
նախկին փորձը ձեվափոխում է ըմբռնմանը : Այնպես վոր սուբյեկտի-
վիզմը սկսվում է ըմբռնման մոմենտից :

բ) Ըմբռնման բովանդակությունն այնուհետև բնական փոփոխու-
թյունների յե յեթարկվում մտապահված ժամանակ, այսինքն՝ ըմբռո-
նելու մոմենտից սկսած մինչև մտաբերելը : Այդ ժամանակի ընթացքում
նախկին ըմբռնման վորոշ տարրեր գունափոխվում են, վորոշ մասեր
խսպառ մոռացվում և նոր ելեմենտներ կցվում նրա հետ, վոր չկային
նախկին փորձի մեջ : Մոռանալը դա մի բնական յերևույթ է և վորքան
մեծ է առաջին ըմբռնման և նրա վերհիշման մոմենտի մեջ յեզած ժա-
մանակը, այնքան մոռացված տարրերն ավելի շատ են լինում :

գ) Մի վորոշ ապրումի հիշողական պատկերն այն ժամանակ և ա-
ռանձնապես խեղաթյուրվում, յերբ կարն ժամանակ այդ ըմբռնու-
թից առաջ և հետո այնպիսի ապրումներ են տեղի ունեցել, վորոնք նման
են իրար հետ և ել դժվար է նրանց իրարից բաժանել :

Իսկ յեթե այդ ապրումներից մեկը հատուկ զգացմունքով և հետա-
քքրականությամբ է շեշտված և աչքի յե ընկել, նա յետ է մղում
մյուսներին և ամբողջ խումբ ապրումների համար դառնում է վորոշիչ
ուժ՝ վերհիշելու ժամանակ (որինակ, ուսանողական տարիների մասին
խոսելիս, ամեն բան հաճելի յե նկարագրվում, թեև կյանքի ¹⁰ն առու-
րյայի մեջ է անցել) : Նշանակում է մի վորոշ զեպքի մասին պատմելիս
մենք անգիտակցորեն ի նկատի յենք առնում նաև այդ զեպքի նման
զեպքերի ապրումների տարրերը :

դ) Հին զեպքի վերարտադրության վրա խեղաթյուրող է ազդում
նաև սովորությունը : Հիշողական մտապատկերներն աստիճանաբար
կորցնում են իրենց առանձնահատկությունները և ավելի ու ավելի մո-
տենում են ընդհանուր սխեմայի, որինակ, նախկին մի գրոսանքի մա-
սին պատմողը չի նկարագրում բոլոր մանրամասնությունները, այլ նը-
կարագրի մեջ այնպիսի գծեր է մտցնում, վորոնք սովորաբար տեղի յեն
ունենում այսպիսի գրոսանքների ժամանակ : Յերբ մեզ հորցնում են,
թե այն ինչ սենյակում տեսած կարասիքն ինչ գույն ունի, առանց տա-
տանվելու պատասխանում ենք «զեղին», թեև զեղին չէ, վորովհետև

մեր սենյակինը զեղին գույն ունի : Մեր մտքում կայուն ձևեր ընդու-
նած բովանդակությունները հաճախ բոնում են այս կամ այն զեպքի
մանրամասն նկարագրի տեղը :

յե) Մոռացման պրոցեսը մասամբ դանդաղում, կանգ է առնում,
յերբ մի ապրումի մասին խոսում ենք, վերարտադրության ենք յեն-
թարկում : Առաջին անգամ մի զեպքի մասին խոսելիս զեպքն առարկա-
յութեն և մանրամասն ենք պատկերացնում, իսկ յեթե հետո ելի նույն
զեպքի մասին ենք խոսում, այստեղ արդեն չկա ուսալ զեպքի կենդանի,
վառ պատկերացումը, այլ մասամբ կրկնում ենք նախկին պատմածը,
հին պատմածն արդեն ազդում է նոր պատմածի վրա և վորքան շատ
ենք պատմում, այնքան հեռանում ենք բուն զեպքի ճիշտ պատկերացու-
մից, վոր միայն սխեմատիկ պատմելու, այլ նոր տարրեր ավելացնելու
պատճառով : Հենց դրանով է բացատրվում այն հանգամանքը, վոր
ստախոսը (վորը շատ է սիրում սուբյեկտիվ լրացումները), վորքան
հաճախ է պատմում իր ստերի ու ցանկությունների մասին, ավելի ու
ավելի յե հավատում, վոր իր պատմածները ճիշտ են և վերջն ել շատ է
վերավարվում, յերբ իրեն չեն հավատում : Ծշմարտախոս մարդը յեթե
ուշադիր լինի իր պատմածներին, կտեսնի, թե ինչպես նույն բանի մա-
սին կրկնակի պատմելիս, վերջին պատմածը բավականին տարբերվում է
առաջին պատմածից :

զ) Բառերը—լեզուն նույնպես պատճառ են դառնում խեղաթյուր-
ման. բառերի իմաստները ճիշտ չիմանալը, մի բառ մի այլ բառի տեղ
գործածելը, հմուտ չլինելը, ներքին վիճակները բառերի հետ կապակ-
ցելու մեջ և այլ նման հանգամանքներ պատճառ են դառնում, վոր խո-
սողն անգիտակցորեն խեղաթյուրի իր պատմածի բովանդակությունը :
Հոգեկան բովանդակությունները սեալ վիճակներ են, իսկ բառերը պայ-
մանական (սիմվոլիկ) նշաններ այդ բովանդակությունների համար :
ամեն մի մարդ նույն հաջողությամբ չի միացնում պայմանական նը-
շանները (բառերը) հոգեկան բովանդակությունների հետ :

ե) Վերարտադրության ժամանակ հակայական նշանակություն ու-
նի վերարտադրողի վերարտադրման մոմենտի հոգեկան վիճակը. ինչ
աստոցիացիայի սղակներ կան այդ բոլորին նրա զիտակցության մեջ,
ինչով է գրազված նրա ուշադրությունը, ինչ զգացմունքի ազդեցու-
թյան տակ է գտնվում, արամազիլը է, թե անտրամադիր, մտազրու-
թյուն ունի որչեկտիվ լինելու, թե ուզում է գիտակցաբար ստել և
այլն, այս բոլորն ազդում են վերարտադրության վրա :

ը) Հարց տալը կարևոր դեր ունի վերարտադրության ժամանակ-
յեթե մեկն ազատ պատմում է իր ապրածի մասին, կարող է նրա պատ-
մածը բովանդակությամբ ազգատ լինել, բայց ընդհանրապես ճիշտ է

լինում իսկական ղեկավարի համեմատութեամբ: Յերբ հետս պատմողին հարցեր եմք տալիս, վոր իր պատմածի վորոչ թերինները ճշտի, հաճախ դրանով նրան ղեկավար անճշտութեանն ենք մղում, մանավանդ յեթե մեր հարցերը նրա համար հենարաններ չեն դառնում ղեկըն ալելի լավ վերհիշելու: Պատասխանողն աղալիս հարցերի պատասխանում ե ըստ սովորութեան (որինակ, յեթե հարց ես տալիս, թե կահարասիքն ինչ դուքն յեր, նա ըստ սովորութեան ասում ե. «ղեկըն», թեև ղեկըն չի յեղել):

Հարցը հաճախ պատասխանը պատմողի բերանն ե դնում:

Հարցնող անձն ել ե ազդում պատասխանողի վրա. պատասխանողը յենթարկվելով հարցնողի հեղինակութեանը, իր պատասխանները հարմարեցնում ե հարցնողի պահանջներին, (ինչ բան կուզի լսել հարցնողը) այս ղեկընում պատասխանողն ինքնավստահութեան չունի ե ներչնչվում ե հարցնողից:

Հարցնողից վախենալը, նրան արտակարգ չափերով հարցելը կամ սիրելը պատասխանողին կարող ե տանել ղեկավարի ղեկավարված սուտը (այս տեսակետներից պետք ե մոտենալ դատավարութեան ժամանակ տեղի ունեցող վկայութեաններին):

Թ) Մանկան վերարտադրութունը. մանկան վերապատմելն ալելի բիչ վատահելի յե, վորովհետև նրա ուշադրութեանն այլ ուղղութեան ունի, պատասխանում ե ավստմատ կերպով, հեշտ ե ներչնչվում ե հեղինակութեան յենթարկվում, սուրյեկտիվ լրացումները նրա մոտ ալելի ուժեղ են. նա ընդհանրապես մտադրութեան չունի փաստական տեղեկութեանն ռալ իրողութեան մասին, այլ մեծ հաճույք ե ստանում իր յերեակալութեան խողերից ե չափազանցութեաններից: Յեթե կարողանում ենք մանկանը արամադրել ճիշտ տեղեկութեաններ տալու, նրան սակայն պակասում ե հաճախ ըննադատական ընդունակութեանը, չի տարբերում իր հիշողական իրական-փաստականն իր կատարած սուրյեկտիվ ե քմահաճ լրացումներից ե հավելումներից, նա իրեն «ցանկանլի մտապատկերները», վոր լի յեն հաճույքով, մտցնում ե փաստական պատկերների մեջ: Մտնուկն առհասարակ անտարբեր վերաբերմունք ունի ղեկավար ճշմարտութեանը, աստիճանաբար կյանքի վարձի ե կրթութեան մեջնցով ե նա գալիս այն համոզման, վոր ճշմարտութեանը հասարակական կյանքի նորմալ փոխհարաբերութեան սրտմաններից մեկն ե:

Մտնուկը վերաբարադրութեան ժամանակը շատ հեշտութեամբ ե յենթարկվում ներչնչման. նա իր անձնական վորձից գիտի, թե ինչ պատասխաններ են հաճելի վիճակ ստեղծում ե ինչ պատասխաններ՝ ահաճ, այդ շատ անգամ նա հասկանում ե հարց տվողի խոսելու տոնից ե մի-

միկայից: Մանկան խոսելը, մի բան զնահատելը մեծապես կախված ե այն բանից, թե նա վորքան ե սիրում կամ ասում այր կամ այն բանը, այս կամ այն անձին: Որինակ, յեթե սիրված մի աչակերտ մտրգանքի ժամանակ սխալ շարժումներ ե անում, նայող ընկերները Տ2 տակար պնդում ե, վոր նա սխալ չի արել ե այդ արվում ե ասանց ղեկըն խարդախելու ցանկութեան:

Բ) Հիշողութեան ծավալը. Հիշողութեան ծավալը վորոչում ե նրանով, թե մեկն ինչ քանակի փաստեր կարող ե մտապահել ե վերարտադրութեան ժամանակ ոչտադործել: Մտալի մեծութեանը կամ փոքրութեանը պայմանավորված ե ուղեղի ամրագնդման (պլաստիկականութեան) ընդունակութեամբ նաև նրանով, թե մեկն ինչ յեղանակներով ե մի բան սովորում: Հիշողութեան ծավալի տեսակետից մարդիկ զգալի կերպով տարբերվում են իրարից. կան հիշողութեան արտակարգ մեծ ծավալ ունեցող մարդիկ, մանավանդ իմացութեան վորոչ ասպարեկներում: այսպես որ. Պոնտոսի թագավոր Միհրդատը հասկանում եր 22 լեզու, անդլիացի պատմարան Բյակլը 29 տարեկան հասակում հասկանում եր 19 լեզու: Կարդինալ Մեյցսթանտին հասկանում եր 66 լեզու, վորից 36 լեզու գիտեր լիակատար կերպով լավ. 11 լեզու բավարար, 7 լեզվով վատ եր խոսում, իսկ 12 լեզվով կարդում եր: Մի հայտնի յերաժշտի 2 տարեկան աղջիկը յերգում եր հոր հեղինակած յերաժշտական կտորները, յերբ հայրը նրան ձայնակցում եր պաշտամուրով:

Գ) Հիշողութեան տեղորոշումը. նայած թե մեկը վորքան յերկար ժամանակ ե իր ապրածները մտապահում կամ մոռնում, բառ գործ յել վորոչում ե նրա հիշողութեան տեղորոշման ուժը, վորը տարբեր մարդկանց մոտ տարբեր ե լինում, վորոչ տարբերում հիշողութեան տեղորոշումը յերկար կամ կարճ ե լինում:

Դ) Հիշողութեան արագութեանը. կան մարդիկ, վորոնք իրենց ապրածը հեշտ ու արագ են վերհիշում, ուրիշները՝ դժվարութեամբ ե դանդաղ: Յերեկաները դանդաղ ե դժվար են վերհիշում:

Յ) Հիշողութեան բազմակողմանիութեանը կամ միակողմանիութեանը.

Կան մարդիկ, վորոնք առհասարակ ամեն բան ընդհանրապես լավ են հիշում, շատերը միայն մի քանի սպափորութեաններ են լավ հիշում (աստրիկաներ, անուններ, ձայներ, շարժումներ), ուրիշներն ել միմիայն մի վորոչ բան են ստանձնապես լավ հիշում (միմիայն գեմքեր, կամ գույներ, կամ յերկրաչափական ձևեր, կամ անուններ, կամ թվեր ե այլն): Դրա համար ել այս կամ այն տեսակի հիշողութեան անհատը հարմար ե լինում այս կամ այն պրոֆեսիայի համար:

5. Հիշողութեան տեսակները.

ա) Հիշողութեան լինում է մեքենայական այն դեպքում, յերբ սովորելիքն մասերն իրարից չեն բղխում արամարանորեն, չեն կապակցված իմաստներով և մաքր մի փորձ մարդջություն չեն ապրիս (որինակ, վանկեր, անկապ բառեր, անուններ, թվեր սովորելը): Մեքենայական է հիշողութեանը նաև այն դեպքում, յերբ իմաստ ունեցող մի նյութ անգիր և արվում, կամ միտք ունեցող լսված կամ կարգացած նախադասութեանները յուրացվում են մեկի կողմից բառացի իմաստը հասկանալու: Մեքենայական է հիշողութեանը նաև այն ժամանակ, յերբ հիշված բովանդակութեաններն իրար հետ կապակցված են միայն թե արամարանական իմաստի տեսակետից, այլ արտաքին պատահական սուպրաթյութեաններն ազդեցութեամբ, որինակ, տեսել ենք մի ծառ, նրա կողքին մի սայլ, սայլի մոտ մի մեծ քար, քարի տակ լճացած ջուր, տեսնելու ժամանակ ծառի ճյուղը կտարվել և և այլն, այս բոլորը արպատիւրվել և մեր մտքի մեջ և կարող են հետո վերհիշվել, մոչ թե նրա համար, մեր ներքին իմաստներն տեսակետից մի արամարանական ամբողջութեան են կազմում, այլ միմյուրհետև պատահականորեն իրար կողքի յեն յեղել և մենք այդ բոլորը բժրանել ենք միասին, իրար կողքի կողքի, սուղնթեր լինելու հանդամանքն և նրանց կապակցել իրար հետ:

բ) Տրամաբանական հիշողութեան ժամանակ սովորելիք նյութի մասերն իրար հետ կապակցված են և տալիս են ամբողջական միտք. ամեն մի մասնիկը արամարանական ամբողջութեան մեջ իր տեղն ունի: Չեն հիշվում արված բառերը նույն հաջորդականութեամբ, այլ հիշվում են գլխավոր մտքերն ու նրանց կապերը: Ատեղծվում են մտքի սխառեմներ (որ կենդանարանական սխառեմը), մտքանց մեջ են անտրամ և սխառեմի մտքն տեղում տեղավորվում նոր գիտելիքները:

Հիշողութեանը կարելի չէ նաև տեսակներն բաժանել հիմք վերցնելով հիշված հոգեկան յերեմիտի բովանդակութեանը:

ա) Ափփեկալի հիշողութեան. կան մարդիկ, մտքներ համարյա չունեն ափփեկալի հիշողութեան, կամ յեթե ևլ ունեն, շատ թույլ և, սրինակ, մեկը, մտքը ինքզինից հոգիվ և արտալի, արպալում հիշում է դեպքը, մտքը նրա մեջ այժմ մոչ մի գրպամունք չի առաջացնում: Մի ուրիշը, յեթե հիշում է նույնիսկ բժշկի ընդունարանը, սկսում է այն անհանգստութեանը և տհաճութեանը գրալ, ինչ ընդունարանում յեղած ժամանակը:

Մարդու վարմունքի համար այս հանգամանքը մեծ նշանակութեան ունի. յեթե մեկը մի վատ բան է արել և սասցել տհաճ գրպամունք,

բայց հետո այդ տհաճ գրպամունքը բոլորովին մոռանում է, կարող է նորից հին, վատ բանը կատարել:

բ) Խնտիլեկտուալ (մտալի) հիշողութեան ժամանակ հիշվածը վերարկում է գիտելիքների (մտապատկերներ, գաղափարներ և այլն). այս տեսակետից մարդիկ բաժանվում են մի քանի տիպերի (տեսագական, լսողական, շարժողական և խառն, այս մասին հետո ավելի մանրամասն խոսք կլինի):

6. Հիշողութեան զարգացումը.

Վեց ամսական յերեխան տաք ջրով լի բաժակը բռնելուց հետո, յերբ մի քանի օր անց էլի ջրով լի բաժակ է տեսնում, յետ է հրում. մեկ և կես տարեկան յերեխան իր գալակին ճանաչում է յերկու-յերեք շաբաթ շաններուց հետո, 2 տարեկան ժամանակ հիշում է մի քանի ամիս անցնելուց հետո: Ատրիճանարար է զարգանում մանկան մտապատկերներն քանակը. յերեխաներն մոտ մինչև 12 տարեկան հասակն իշխում է մեքենայական հիշողութեանը:

Ընդհանրապես ընդունված է սակ Վյուր յերեխաններն հասուն մտքուց ավելի ուժեղ հիշողութեան ունեն, բայց զա ճիշտ չէ. նախ յերեխաներն հիշելու ճախար փոքր է, յերկար նախադասութեանները, յերկար և շատ հարցերը, շատ սուպրաթյութեանները դժվար են ըմբռնում և միտքը պահում, յերեխաներն հիշողութեան արպալութեանն ալելի թույլ է, ավելի դժվար են ողտագործում իրենց իմացածները: Պատճառներից մեկն անտրամութեանն է, մյուսը՝ վերարտադրելու (տեղորդակցելի) ժամանակի ավելի յերկարատեսութեանը, զրա համար էլ հարցերին ավելի ուշ են պատասխանում: Ատում են, մտք յերեխաներն ավելի հեշտութեամբ են անգիր անում, քան հասունները, զա յել ճիշտ չէ. յեթե հասուն մարդն անգիր անելու այնքան վարժութեաններ կատարի, մտքան գալրոցականը, այն դեպքում նա ավելի հեշտութեամբ անգիր կանի:

Նեչայեվը 8—16 տարեկան աշակերտների վրա, մեքենայական հիշողութեան ուժն ուսումնասիրելու համար, մտքներ կատարեց և այն յեղրակուցութեան յեկալ, մտք մեքենայական սուպրաթյութեանները մեծերն ավելի լալ են հիշում, քան փոքրերը:

Մեծերն մեքենայական հիշողութեանը, ճիշտ է, ընդհանրապես, մասամբ թուլանում է չայլ ողղութեամբ տեղի ունեցող քիչ վարժութեաններն, արամարանական հիշողութեան դերակշուրթեան և կյանքի աննպատ հանգամանքների, մանտվանդ հիվանդութեանների շտրհիվ (նեվրատեսենիա, պակատարյունութեան, գերհոգնածութեան և այլն):

Տրամաբանական հիշողությունն սկսում է զարգանալ 12 ամսեկանից հետո և զգալի արագ ուժեղանում է մինչև 25 ամսեկան հասակը, իսկ իր զարգացման մաքսիմումին և հասնում մինչև 15 ամսեկան հասակը, վորից հետո սկսում է աստիճանաբար բնկնել, իսկ ձերության հասակում բոլորովին թուլանում է :

Մեքուենին նոր ապավորություններն արագ մոռանում է նույնիսկ հաճախակի կրկնություններից հետո, իսկ հին, մանկություն ժամանակից ապավորությունները հիշում է շատ լավ :

Պատճառն ուղեղի Փիզիոլոգիական բնույթի փոփոխվելն է, մանկական ապավորությունների հաճախ, կրկնված լինելը, իսկ նոր ապավորությունների փառ մոռացահիշու պատճառը հաճախորեն հետևյալն է. մտապահվելու համար ելականը միմիայն ապավորվելը չէ (վորը թույլ է ձերունու մոտ) այլ և նոր ապավորությունը վերամշակելը, հին փորձի հետ միացնելը—կապակցելը, յեթև այդ պրոցեսը հաջող և անցի ունեցել, մտապահվում է լավ, իսկ ձերունին նոր ապավորությունները չի կարողանում հին փորձի հետ լավ և հեշտ կապակցել, այդ պատճառով էլ շուտ է մոռանում :

7. Մոռացումն.

Մոռացումը մի բնական և նույնիսկ անհրաժեշտ յերևույթ է. կենսական կարիքների տեսակետից անհրաժեշտ չէ, վոր ամեն անկարևոր, յերկրորդական արժեքի փաստ մտքում պահենք, բացի այդ սրվա մեջ ստացվող ապավորությունների բանակն այնքան շատ է, վոր ուղեղի համար անհնար է այդ բոլորը մտապահել, այդ կերպ կասեղծվեր միայն մի արտակարգ և ավելորդ ծանրաբեռնվածություն :

Յեթև ամեն բան մտքում պահելնք, այն գեպրում անցյալի մի փաստ մտարերին այնքան ժամանակ կպահանջեր, վորքան ժամանակ անցած է յեղել նույն փաստը կատարվելուց մինչև այժմ մտարերիլու վայրկյանը, այսինքն՝ ամեն ինչ պետք է մտարերիլնք ինչ անցել-զարձել է այն փաստը տեղի ունենալուց մինչև այժմ : Բայց իրավես աջպես չի, մեր մտքից զուրս են բնկել, մոռացվել են անհաղին փաստեր, գեպքեր, ապավորություններ և մենք ատանց բոլոր անցած-զարձածը վերհիշելու, իսկույն հիշում ենք հին գեպքը : Ատանց գիտակցական միճակնիշի խոչոր թվի իսպառ, իսկ մի մասն յեյ ժամանակավոր մոռացման, մենք չեյինք կարող մի բան մտապահել և հետո հիշել : Մտապահելն ինքը մի ժամանակավոր մոռացումն է . Ուրեմն մոռացումը մի բնական և անհրաժեշտ յերևույթ է, յեթև միայն մոռացման պրոցեսն արտակարգ չափերով չի տեղի ունենում :

Մի բան մոռանալու համար չպետք է վորոշել, վոր անհրաժեշտ և մոռանալ և վորձեր անել վորոշումի միջոցով այդ բանը մոռանալ : Միշտ մտածել այն մասին, վոր անհրաժեշտ է այս կամ այն ինչ բանը մոռանալ, նշանակում է այդ բանն ավելի լավ հիշել, վորովհետև այդ բանը նորից ու նորից է ապրվում մեր կողմից կենտրոնացած ուշադրություն մասնակցութամբ : Այդ դեպքում միտքն այլ բանով պետք է զբաղեցնել, պետք է շրջապատը փոխել (որինակ, ճանապարհորդել) :

8. Լավ հիշելու պսիխոտեսիսիկան

Ամեն մի մարդու ուղեղի հիշելու կարողությունը բնականից վորոշ ուժ ունի, մարդիկ բնականից փառ կամ լավ են հիշում ստացած ապավորություններն ու գիտելիքները՝ նայած թե ճրանց ուղեղները ինչ ապավորվողություն և պլաստիկականություն ունեն, մարդիկ կան, վորոնց ուղեղային նյութը բնականից շատ նուրբ ապավորվողություն և ամբարանգելու հատկություն ունի, վորով և պայմանավորվում է բնականից նրանց լավ հիշելու բնույթնությունը, ուրիշների նյարդային այդ նյութի հատկությունը թույլ է : Մինչև այժմ միջոցներ չեն գտնված ուղեղի այդ բնական հատկության ուժը արհեստականորեն ուժեղացնելու : Սակայն հոգեբանական անստանալու և գործնական (պսիխոտեսիսիկան) ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս առաջադրելու սովորելու այնպիսի ձևեր, վորոնց սղնությունը հնարավորություն է ստեղծվում սովորածն ավելի լավ հիշելու և մտքում պահելու :

Այդ միջոցները հետևյալներն են . —

ա) Պետք է սովորել ուղեղի քարմ և հանգիստ ժամանակ, հոգնած ժամանակ սովորածը մոռացվում է հեշտություն :

Մտքում պահելու համար լավ է սովորել յերեկոյան, վորովհետև արտաքին ապավորությունների բշանալու պատճառով ուղեղը բազմազան աշխատանքներ չի կատարում, ուշադրությունն այս ու այն կողմը չի ցրվում : Բնի ժամանակ այդ ապավորությունները (սովորածը) վորոշ չափով յենթադիտակից յեղանակով մշակվում են : Իսկ նույնն ատավոտյան կրկնելուց հետո՝ ավելի լավ է ամբարանգվում, գուցե պատճառներից մեկն էլ այն է, վոր ատավոտյան կրկնելը տեղի յե ունենում վոր թե յերեկոյան սովորելուց անմիջապես հետո, այլ մի ծ կամ 10 ժամ հետո, իսկ ուշ կրկնելը, ինչպես կատաններ լավ է աղղում հիշելու վրա : Տրամաբանական դժվար աշխատանքները (ինդիքներ վճռելը, նոր բարդ հարցեր լուսարանելը) ցանկալի յե կատարելու ատավոտյան :

բ) Մտփորելիքը պետք է տարփորվի ուժեղ (ինտենսիվ) և գիտակից պարզ և վորոշ, թույլ և անորոշ տարփորությունները մտացվում են հեշտությամբ:

գ) Մտփորելիքն մտքում ուժեղ տարփորելու համար, պետք է ուշադիր վիճակում ստփորել, կենտրոնացած լինել, մի կողմ թողնելով կողմնակի, հարցի հետ կապ չունեցող հանգամանքները: Ուշադիր ստփորելու ժամանակ կրճատվում է կրկնությունների կարիքը: Մի տարեկայի կարելի չէ հարյուրավոր անգամ նայել, բայց նրա մանրամասնությունները մտքում չպահել, անուշադիր զիտած լինելու պատճառով:

դ) Մտփորելիքը ուժեղ տարփորություն կթողնի և մտքում յերկար կմնա, յեթե նա լինի հետաքրքիր, զգացմունքներ գարունակող. կենսական շահերի ու կարիքների հետ կապակցված նյութ:

յե) Մտփորելիքը հեշտ կմբռնվի և մտքում յերկար կմնա, յեթե ստփորողն ունի անցյալի համապատասխան փորձ, ապա քրեպիտալի մասսաներ—նյութեր: Բացարձակ նոր անցյալ փորձի հետ կապեր չունեցող նյութը նախ չի հասկացվի, իսկ մեքենայրեն ստփորելուց հետո յեղ, իսկույն կմտացվի:

զ) Նյութը վաղ թե ջուկ, ասանձնացած պետք է ստփորել, այլ կապակցված—գուզորված համապատասխան այլ նյութերի հետ, վորքան համապատասխան ասոցիացիաները շատ են, վորքան րմբոնման ժամանակ շատ զդաշարաններ են մասնակցում, վորքան կոմպլեքսներով են կատարվում մտքի յուրացումներն, այնքան լավ է հիշողության համար: Որ. ատարկայն պետք է վաղ միայն նայել, այլ և լսել նրա ձայնը, շուտֆել այլ ատարկան, հոտոտել և ճաշակել այլ ատարկան, իսկ յեթե նույն ատարկան վերարտադրվի ձեռարկեստային աշխատանքի միջոցներով, ավելի լավ: Կամ՝ մշակվող հողվածք կապակցել անցյալ հողվածների, կյանքի զիպվածների, յերևակայությամբ ստեղծված հանգամանքների հետ և այլն:

Սակայն այս կապակցությունները պետք է տրամաբանական ամբողջության, սխտեմի մեջ մտնեն. եյականը միայն զուգորդումների բազմազանությունը չէ, այլ նրանց սխտեմատիկ կապերը (որ. ստփորած կենդանին գնել կենդանաբանական սխտեմի մեջ, պատմական գեպը՝ պատմության ժամանակագրության մեջ և այլն):

ե) Նյութը պետք է ստփորել ամբողջովին և վաղ մաս—մաս, յեթե միայն ստփորելիքը մեծ ծավալ չունի:

Փորձերը ցույց են տվել, վոր ամբողջովին ստփորելը պահանջում է ավելի քիչ ժամանակ և ավելի քիչ կրկնություններ և շատ ավելի յեր-

կար է մնում հիշողության մեջ, քան մաս—մաս ստփորելը: Այսպես որ. տանը սողանոց մի բանաստեղծություն ամբողջովին ստփորելիս պահանջվեց 2 րոպե 47 վարկյան, կարիք յեղավ կրկնելու 12 անգամ, իսկ մի տարի անցնելուց հետո ստփորածից մնացել էր 23%—ը, իսկ մաս—մաս ստփորելը պահանջվեց 3 րոպե 3 վարկյան ժամանակ, կարիք յեղավ 45 կրկնության, իսկ մի տարի հետո մնացել էր ստփորածի 12%—ը:

Պատճառն այն է, վոր ամբողջովին ստփորելիս շեշտվում է նյութի տրամաբանական կողմը, վորը լավ դուզուրդման համար ուժեղ ազդակ է, բորը մասերը նույն կերպ և նույն քանակով են կրկնվում և ամեն անգամ ընդգրկվում է ամբողջական միտքը:

Յեթե նյութը մեծ է, պետք է արամարանական կտորների բաժանել, կտորները ստփորել և հետո ամբողջը միասին ընդգրկել:

ը) Մի բան լավ մտքում պահելու միջոցներից մեկն էլ կրկնությունն է:

Կրկնությունն ավելի լավ հետևանք է տալիս, յեթե կրկնողը հասկանում է ստփորելիքի միտքը, ամբողջն է կրկնում և վաղ կտոր—կտոր և կրկնությունը բաժանում է որերի վրա. յեթե նյութը դժվար է: Իբար յետևից հաճախ կրկնելով որ. մի բանաստեղծություն անգիր անելիս, պահանջում է ավելի շատ կրկնություն և ավելի շուտ և մոտացվում, իսկ յեթե կրկնությունները որերի վրա յեն բաժանված, ավելի քիչ կրկնության կարիք կա և ստփորածն ավելի ուշ է մոտացվում:

թ) Մի բան ստփորելու համար պետք է սկզբում վանդաղ ստփորել, իսկ հաջորդ կրկնությունների ժամանակ ստփորելու տեմպը (արագությունը) պետք է մեծացնել: Ստփորելիս աշխատանքը շուտ—շուտ ընդհատելը վնասակար է, պետք է աշխատանքը, նույնիսկ փոքրերի համար, տեղ անմիայն 15 րոպե. մեծերը կարող են և պետք է անընդհատ աշխատեն ավելի յերկար ժամանակ: Ծուռ—շուտ ընդհատելը ցրում է աշխատությունը, թուլացնում հետաքրքրությունը և մեր ամբողջ սրգանիք—մի հարմարեցումն աշխատանքի՝ վերանում է և ամեն անգամ նորից սկսելիս անհրաժեշտ է լինում ուժ գործ գնել իր վրա՝ հարմարվելու նոր սկզբից աշխատանքին:

ժ) Մտապահումը և մտաբերումը կարելի չէ մտածար ուժեղացնել վարժությամբ: Մի վորոշ տեսակի աշխատանքի մեջ վարժվելուց հետո (որ. անմիա վանկեր անգիր անել) այն նույն անհատն այնուհետև վաղ միայն նոր արվող անմիա անկող վանկերն է հեշտությամբ ստփորում, այլ նաև ուրիշ, բայց բնութիվով գրան նման աշխատանքներն է կատարում և ստփորում, որինակ այնուհետև հեշտ է հիշում և ստփորում թվեր, անուններ բանաստեղծություն և այլն:

Այս կերպ վարժվելուց հետո ապագայում նման մի նոր բան ստփոր-

ընկա կրկնութիւնները քանակը պահպանում է, որ վարժակուց առաջ անհրաժեշտ է լինում մի բան անդիր անելու համար 20—30 անգամ կրկնել, իսկ վարժակուց հետո բավական է լինում 2—5 կրկնութիւնը:

II. ԱՍՍՈՏԱՅԻՍԻԱ.—ԶՈՒԳՈՐԿՈՒՄՆ

Մարդու վարժուների հիմքը կարճուց պոլիտֆիզիքական յերևույթները յեթե իրար հետ կապակցված չլինեն, յեթե իրար անցնելու հնարավորութիւններ չունենային, աչն զեպրում անհնար կլինէր մտաբերումը—սեպրուզակցիան. սեպք է նոր զրգիւր հնի հետ կապվել կարողանա և հին զրգիւններն էլ իրար հետ կապակցվեն, վոր մի նոր ուղի բռնի զեպրում հնարավոր լինի անցնել հին սարածներին և նրանց վերարտադրել:

Իսկապես էլ տեսնում ենք, վոր մարդու վարժուները բազմազան կապակցութիւնները զանազան շղթայակցութիւններ է ապրիս, վորի մեջ զանազան յերևույթներ իրար զեմ պայքարում են, իրար ուժեղացնում, թուլացնում, նույնիսկ իրար վաջնացնում, կապակցվում իրար հետ կամ իրարից բաժանվում:

Գեո Արևատոտելը նկատել էր, վոր զիտակցական յերևույթների կապակցութիւնները մեջ վորոշ սրինակարգութիւն կա: Հսգեկան յերևույթների զուգորդման—ասոցիացիայի խնդրով հասկանալու հետաքրքրվել են 19-րդ դարում անգլիական հոգեբանները (Սպենսեր, Միլ և Բեն), վորանց կարծիքով հսգեկան բոյսը յերևույթները (մտապատկեր, զաղափար, մտածողութիւն, ցանկութիւն, զրգայմունք և շարժումներ) իրար հետ զուգորդված են վորոշ սրենքներին—զուգորդման սրենքները համաձայն:

Նոր հոգեբանութիւնը յերկու տեսակ ասոցիացիա յե ընդունում՝ սորնթերութիւն և նմանութիւն:

1. Աորնթերութիւն ասոցիացիա (զուգորդումն)

Նույն ժամանակում և տարածութիւնը իրար մոտ յեզոյ առարկաներից ստացվող զրգիւններն աչնպես են զուգորդվում իրար հետ, վոր սպառաջում յեթե առաջանում է աչն զրգիւններից մեկը, արթնանում է նաև մյուսն՝ առանց համապատասխան նոր զրգուի, սրինակ՝ տեսնում էմ աչն զիբքը և հիշում ընկերոջն և մի նկար, վորովհետև անցյալում աչն զիբքը տեսած էմ յեզել ընկերոջն ձեռքին, վորը նստած էր աչն նկարի տակը, վորն աչմ հիշեցի:

Տեսնում էմ ծառը և հիշում մի մարդու, վորին անցյալում տեսել

էմ աչն ծառի մոտ. մեկին տեսնում էմ և հիշում կողքի ընկերոջը, վորը զատերի ժամանակ միջո նրա մոտ է նստած լինում:

Ուրեմն տարածութիւնը կողք-կողքի, սորնթեր զրգիւնները, վորոնք նույն ժամանակումն են տեղի ունենում, կապակցվում են իրար հետ:

Նույն ժամանակում տեղի ունեցող աչն զրգիւններն աչնում են իրար վրա հետեյալ կերպ:

ա) Յեթե տարբեր զրգիւններ արթնացնում են միտուեսակ տեսիլցիա, ուժեղացնում են իրար, սրինակ, թղթի վաչից աչնում աչն ավելի ուժեղ է կծկվում, յեթե թղթի վրա արեի ծառագայլներ են ընկած. սենյակի մեջ յեզոյ աչնում իտանգարվողն ավելի յե աչնում, յեթե զրաից էլ ավելի ուժեղ ձայն է լսում:

բ) Գրգիւններն իրար յտպիանում կամ քուլացնում են, յեթե նույն ժամանակ աչնում աչն զրգիւններն արթնացնում են տարբեր տեսակի և իրար հակասակ տեսիլցիաներ: Որինակ, զրեյու ժամանակ յեզոյ յարվածութիւնը թւլանում է, յեթե լսվում են հաճելի նվագածութիւն ձայներ:

գ) Յերը մի զրգիւն իտպանում (տարմողում) է նույն ժամանակ տեղի ունեցող մի աչն զրգուի, տարմողը (արգելակը) վերջանալուց հետո վերջինս արտահայտվում է աստուկութիւնը. սրինակ, առաջի ցովը մոտացվում է լուրջ ընթերցանութիւն ժամանակ, բայց ընթերցանութիւնը վերջացնելուց հետո ցովն ավելի սաստիկ է զգացվում, յուրջ հասարակութիւնից հեռանալով, անհասարկատարում է ուժեղ շարժումներ:

Յեթե մի քանի զրգիւններ տեղի յեն ունեցել իրար անմիջապես հաջորդող ժամանակի մոմենտներում, յերը ստացվում է առաջին զրգիւրը, հաջորդ զրգիւններն արթնանում են առանց ֆիզիքական նոր զրգիւնների: Յերը ստաջին ձայները յեյուց հետո արթնանում են հաջորդ ձայներն արանց յեյու. տեղեֆոնի զանցի ձայնը յեյուց հետո նրան էմ մոտենում և առում «լսում էմ»: Մոտում էմ սենյակն և անմիջապես հիշում աչն տունը, ուր աչրել էմ անցյալում. պատճառն աչն ծաղկայա փունջն է, վոր զրգում է զրատեղանիս վրա: Հին տան բակում կային աչն ծաղիկներից, տունը մոտեյուց առաջ նախ տեսնում է յի աչն ծաղիկները:

Սովորաբար զարձած զործողութիւնները բացատրվում են սորնթերութիւն զուգորդումը (որ. առաջալսան վեր կենալ, լիացվել, թեյից, բանփորի աշխատանքը զործարանում, պաշտոնիայի աշխատանքը զրատենյակում և աչն) զրգիւնների զուգորդումները (շարժումները) տեղի յեն ունեցել իրար

1040



նրանց մեջ ստեղծվել է սերտ կապ այնպես, Վոր ստաճին զրգիտն ու շարժումը բավական է, Վոր մյուս շարժումներն, զուգորդման հիման վրա, աեղի աեննան մեքենայերն նույն հաջորդականությամբ:

Ստվորությունը պարզացնում, հեշտացնում ու արագացնում է մարդու արարքները, բիչ է հոգնեցնում, անասում է ուժերը, կարիք չի լինում կենտրոնացած ու շարժության և գիտակցության մասնակցության:

Ատրնթերության զուգորդմամբ իրար հետ կապվում են վոչ միայն նույն զգայարանի տպավորությունները (տեսողականը—տեսողականի, լսողականը—լսողականի հետ և այլն) այլ և տարբեր զգայարաններին տպավորություններն են կապակցվում իրար հետ: Որ տեսողականը կապվում է լսողականի հետ—կարգալու ժամանակ տուներն տեսողական բմբնումներին միանում են լսողականները (տատերի հնչյունները), իսկ սրանք էլ միանում են շարժումների հետ (արաստանել հնչյունները):

Նվազելիս, գրելիս տեսողականները միացած են լսողական և շարժումների բմբնումների հետ: Ստարկաների բմբնումները կապված են տեսողական, շոջախելիքի և այլ տպավորություններից:

Կարող ենք ասել, Վոր մեր տարբեր զգայարանների տպավորությունները կարող են իրար հետ զուգորդվել՝ կարմելով զանազանագույն կամբինացիաներ:

2. Նմանության ասսոցիացիա (զուգորդումն)

Հոգեֆիզիոլոգիան պրոցեսներն իրար հետ կապակցվում են վոչ միայն ատրնթերությամբ, այլև նմանությամբ: Մի զրգիս կարող է արթնացնել մի այնպիսի հոգեկան բովանդակություն, Վորի հետ նա չի ապրվել նույն ժամանակում կամ անմիջապես հետո, այլ Վորին միայն նման է Վորոչ կազմերով: Որինակ, ծանոթիս և նրա լուսանկարչական նկարը միասին, իրար հետ չեմ տեսել յերբեք, բայց այժմ նրա նկարը տեսնելով, կարող եմ հիշել նրան՝ այդ յերկու յերևույթի մեջ զոյություն աենցող Վորոչ նմանությունների պատճառով: Մի քանի այլ որինակներ. զազային լույսը հիշեցնում է լուսինը, մի մարդու նրմանությունը հիշեցնում է մի այլ մարդու, փչոց ցուրտ քամին հիշեցնում է ցուրտ յերկրները, Ստուցյալ սվկիանոսը, վերելից թափվող վտակը հիշեցնում է մի մեծ, մի այլ աեղ աեսած, ջրվեժ կամ նրա նրկարը և այլն:

Նմանության զուգորդումը պատճառ է դանում զանազան գլուտերի, տեղեֆոնի գլուտի հիմքն և ծառայել նյարդային սխտեմի կա-

ուցվածքը, յեռացող ջրով թեյամանը հիմք է դարձել շոջեմեքենայի գլուտի:

Նմանության հիման վրա յեն կազմվել գիտության ցապախարները. զազախարների նմանությունները հիմք են ծառայել գլուտակա սխտեմի (զազախարների կյատիֆիկացիա—որ, կենդանարանության սխտեմ): Նույն հիման վրա յեն կազմվում սրենքները: Մարդը կենդանուց տարբերվում է նաև նմանության զուգորդման նրությամբ և զարգացմամբ, նրա մտավոր բարձր ֆունկցիաները հիմնվում են նմանության զուգորդման վրա:

Հոգեբաններից մումնք ուչում են տարբերել մի այլ սեռակի ասոցիացիա ևս, Վորին անվանում են կամարատի (հակադրության) զուգորդումն: Կանարատի սրինակներ. լույս—խաղար, ծախ—աջ, մուկ—հանդիսա, բարձրահասակ—կարճահասակ և այլն: Սրանց կարծիքով այս զուգորդից ամեն մեկի մի ալակն արթնացնում է մյուս ուզակը. սրինակ, թղուկ մարդուն տեսնելիս հիշում ենք հակա մի մարդու, թեև այդ յերկուսին միասին չենք տեսել անցյալում. մեկը հիշեցնում է մյուսին իր մոչ նմանությամբ յի կանարատա (հակադիր) լինելով: Այս բացատրությունը ճիշտ չէ. թղուկը հիշեցնում է հակային գրանց մեջ զոյություն աենցող նմանության պատճառով այնպես, թղուկը միջին հասակից տարբերվում է և մեր մեջ ասոջացնում է արատավորության միտք և զգացմունք, հական ևս տարբերվում է միջին հասակից և նույնպես ասոջացնում է արատավորության միտք և զգացմունք: Թղուկը և հական իրար նման են նրանով, Վոր յերկուսն էլ միջին հասակից տարբեր են և ասոջացնում են արատավորության զգացմունք և հենց այդ նմանությունն էլ պատճառ է դանում նրանց զուգորդման: Ըույսը հիշեցնում է խաղարը, Վորովհետև կյանքում հաճախ ենք հանդիպել, Վոր լույսին հաջորդի խաղարը կամ րնջահասակն. սրեմն սրանք իրար ատրնթեր զոյություն են աենցել: Այս սվկայները մեզ սխալ բերեն այն յեղրակացության, Վոր զոյություն չունի ջակ տեսակի կանարատա զուգորդումն, այլ Վոր այդ յերկուսի բացատրվում է ատրնթերության և նմանության զուգորդմամբ:

3. Յենթագիտակից ասսոցիացիա.

Հոգեկան բովանդակությունները կապակցվում են իրար հետ գիտակից կերպով, և մերարատարվելիս պարզ գիտակցում ենք, Վոր մեկը կապված է մյուսի հետ և կամ նրանց կապակցությունը չենք գիտակցում, այլ այդ կապը մնում է յենթագիտակից: Այսպիսի մի զեկդք.

մեկն իր սենյակում պարագլխա, հանկարծ, անսպասելի հիշում է մի ծերունու և փոքր աղջկա, փոքր տասնյակ տարիներ առաջ տեսել և Շվեյցարիայի հովիտներից մեկում: Յերկար սրբազաններից հետո համոզվում է, փոքր պատճառը յեղել և այն ծաղկեփնջի մի փոքր տեսակի ծաղկի հոտը, փոքր նա առաջին անգամ զգացել և այն հովտում, ուր տեսել և ծերունուն և փոքր աղջկանը:

Ուրեմն զուգորդման սպառը յեղել է հոտը, փոքր յենթադիտակից կերպով առաջացրել և զուգորդումը: Կատարում են հետևյալ փորձը. մեկին ցույց են տալիս տասը թերթիկներ, փորձնց մեջ տեղը հաստ և մեծ տառերով մի-մի բառ և գրված, իսկ անկյուններում փոքր և բարակ դժերով յայտնական տառի նշան: Յերբ փորձվողին արիչ թերթ են ցույց տալիս փորթ վրա այլ բառ և գրված և ծայրին յայտնական նշան և, նրան ասում են, փոքր այդ բառը տեսնելիս մի այլ բառ արտասանի, նա այն բառն և արտասանում, փոքր գրված է հենց այդ թերթի վրա, փորն ունի յայտնական նույն նշանը: Յերբ հարցնում են պատճառի մասին, թե ինչու այդ բառն արտասանեց, չի կարող պատճառը պարզել, իսկ պատճառը յեղել և յայտնական տառը, փորն անգլխակից յենթադիտակից կերպով ասոցիացիայի սպառ և կապմել:

Վերջենք նույն մատերիայից շինված յերկու խորանարդ, մեկը մեծ, մյուսը փոքր, բայց համասար ծանրությամբ:

Նախ մեծը և հետո փոքր խորանարդը վերցնողն ասում է, փոքր փորն ավելի ծանր է. ինչո՞ւ. յերբ մեկը պատրաստվում է մի բան բարձրացնելու, նա նախորդ փորն շափով լարում և իր մկանները, ծանր բանի համար ավելի շատ, թեթևի համար՝ ավելի քիչ: Փոքր խորանարդ վերցնողն ասում է յարում, փորով հետ թեթև և յենթադրում, բայց վերցնելիս ավելի ծանր է թվում, քան սպասում էր և րնկնում է մյուս ծայրահեղություն մեջ՝ համարելով այդ ավելի ծանր, քան մյուսը: Նշանակում է գիտակցության շեմքի յետևը տեղի յենթացել ասոցիացիայի պրոցես, փոքր սակայն ազդում է գիտակցության վրա: Մինչև հինգ տարեկան յերկրան չի յենթարկվում այս իլլյուզիային, փորով հետ կյանքի յրթի փորձը գեո նրան պակասում է:

Ըմբռնման վրա ազդող ապստրոֆիկան միշտ էլ գիտակից կերպով չի ազդում բմբռնման վրա, այլ մեծ մասամբ յենթադիտակից կերպով, մեկն իր հին փորձի միջոցով մի առարկա մի փորն կերպ և բմբռնում, առանց գիտակից կերպով հասկանալու, փոր հին փորն և արդատեղ յեր կատարել:

4. Արտաֆին և ներֆին ասոցիացիաներ.

Հոգեկան բովանդակություններն իրար հետ զուգորդվում են միշտ էլ ըստ առնթերության և նմանության, բայց այս յերկու որենքների համաձայն կապակցվող բովանդակությունների կարևորության, արժեքի և կապի ընդթի տեսակետից տարբերվում են իրարից: Նայած այդ կապերի ընդթի ներքին արժեքին ասոցիացիաները լինում են՝ ներքին և արտաքին:

ա) Արտաֆին ասոցիացիա. Արտաքին ասոցիացիայի ողակներն իբրար հետ կապված են պատահական, վրչ եյական, մակերևութային կապերով, յերբ յերկու ազդումներ պատահականորեն ազդվել են առնթեր կամ իրար նման են արտաքին—պատահական հատկանիշներով, զուգորդվում են իրար հետ, որինակ. սուտն—սեղան, սենյակ—հատակ, ծառ—գյուղացի (մոտը կանգնած է յեղել). նույն ձևով իրար հետ կապվում են նմանահնչյուն բառերը, փոր իմաստներով մոտ չեն իրար որ. կերպ—գերբ, լույս—կույս, լուր—լուս, տուն—չուն և այլն:

բ) Ներֆին ասոցիացիա. Այս դեպքում հոգեկան բովանդակություններն իրար հետ կապակցվում են ներքին—խորը, արամարանական կապերով՝ հիմնված նմանության, կախվածության, յենթարկվածության և այլ անհրաժեշտ հարաբերության վրա. որ. հրդեհ—կայծ (կայծը հրդեհի պատճառ), շարժում—հարված (հարվածը շարժման պատճառ), ձի—խոտակեր (ձին յենթարկված է «խոտակեր» դադարիսին), մետաղ—պղինձ (մետաղն ընդգրկում է իր մեջ պղինձը), մարմին—մեքենա (իրար վերաբերմամբ ունեն խորը նմանություն):

5. Ազատ և պայմանավորված (դետերմինացիայի յենթարկված) ասոցիացիաներ.

ա) Ազատ զուգորդումներ. Այս ձևի զուգորդման շղթաների ողակներն իրար հետ կապակցված են առնթերության և նմանության հիմունքներով. բայց ազատ զուգորդումներ ենք ասում նրա համար, փորով հետև մեր փորնումը, մեր ցանկությունն ու վճիռն այստեղ գեր չունեն, մեր զուգորդման շղթաները չեն պատում մի հիմնական առանցքի, նպատակի շարժը, այլ այդ ողակներն իրար են հաջորդում ազատ, մի տեսակ քմահաճ ձևով, յատանց մեր կամեցողության և ծրագրի. որինակ, յերբ մի գրգիռ պատճառ է դառնում, փոր առանց մեր ցանկության այդ գրգռի հետ կապված բովանդակությունները վերհիշվեն, կամ յերբ միտքը «թափառումներ» է անում և հետո յենք զգում, փոր մեր մտքերը շատ հեռու յեն գնացել, կամ յերբ մեկը մի բառ է

22

լում և մի սլառասխան բառ և արտասանում, ինչ այդ բոլորին բերանն է գալիս, առանց մտածելու և այլն: Այս դեպքում անհատն իրեն պատ- սիվ է դրում և զուգորդումներն իրար մեքենայորեն են հաջորդում:

բ) Պայմանավորված աստղագիտական. Այստեղ կա մի նպատակ, մի առանցք, վորի շուրջը պտտում են զուգորդման շղթաները, ինչ այդ հիմնական նպատակին, վորոշմանը չի համապատասխանում, դուրս է նետվում գիտակցութունից, ինչ համապատասխան է, նա յե զիտակ- ցաբար վերհիշվում, այս դեպքում անհատն ակտիվ վերաբերմունք ու- նի դեպի իր մտայնոր աշխատանքը, որինակ, ջանք թափել վերհիշելու մի բավական մոտացված դեպք, մի կարևոր փաստ, գրքից այս կամ այն կտորը, մի ցիտատ (վկայություն), մի որինակ և այլն, այսպիսի աս- ստղագիտական ռեզուլթյամբ աշխատում ենք վճռել մի խնդիր, յուսա- բանել գիտական մի հարց, ծրագրել ներկա և ապագա մեր անելիք- ները, և այլն:

Ամեն մի անհատի մեջ կան աստղագիտականներն ուղղութուն տվող (դետեռմինացիա անող) հիմնական արամադրութուններ (տեղեկեց- ներ), վորոնց մասին կիտսենք ստորև:

6. Զուգորդման սկիզբը և ընթացքը.

Զուգորդման համար անհրաժեշտ են մի քանի բովանդակություն- ներ, ամեն մի զուգորդում պետք է ունենա մի յեղակիտ, զուգորդման յեղակետ կարող են դառնալ արտաքին գրգիռները, վորոնք պատճառ են դառնում, վոր վերհիշվեն նրանց հետ կապված հին բովանդակություն- ները, յեղակետ կարող են դառնալ գիտակցության մեջ արթնացող նույնիսկ պատահական մտապատկերները, մեր վորոշումները և այլն:

Այժմ խնդիր է առաջանում, թե ինչու նույն ժամանակում մարդու վրա ազդող գրգիռներից և գիտակցության մեջ դուրս յորացող մտա- պատկերներից շատ-շատերն անհետ կորչում են, զուգորդման շղթա չեն տալիս, իսկ ուրիշների հետ կապվում են զուգորդման շղթաներ, կամ ինչու միևնույն գրգիռը մի անգամ յեղակետ է դառնում զուգորդման, իսկ մի այլ անգամ զուգորդում չի տալիս: Այս յերևույթի բացատրու- թյան պատճառները հետևյալներն են.—

ա) Այն գրգիռն է զուգորդման սլառառ դառնում, վորը մյուսներ- քի համեմատությամբ ավելի ուժեղ է (ինտենսիվ). ուժեղ գրգիռը յետ է մղում մյուսներին, վորով նպատավոր պայմաններ է ստեղծվում, վոր նրա հետ կապված զուգորդումներն արթնանան:

բ) Ուշադրության առարկա դարձած բովանդակությունն ավելի ավելաներ ունի զուգորդման յեղակետ դառնալու, վորովհետև գիտակց-

վում է ավելի պարզ ու վորոշ և դրա համար էլ նրա հետ կապված ս- դակներն ավելի տվյալներ ունեն վերհիշվելու և դրա համար էլ մի բան հիշելու համար մեր ուշադրութունը կենտրոնացնում ենք այդ բանի վրա:

գ) Հոգեկան մի բովանդակության զուգորդման յեղակետ կարող է դառնալ նայած թե նա ինչ չափով է կապված գգացմունքի (եմոցիա) հետ, ինչ չափով են մոտ մեր հետաքրքրության, կենսական շահերին և ապագիցիպիաներին: Այս տեսակետներից անտարբեր գրգիռները սո- վորաբար զուգորդումներ չեն տալիս:

դ) Գրգիռներից մեկն է զուգորդման յեղակետ դառնում, վորովհե- տև ավելի համապատասխան է մեր որդանիքով և գիտակցության արվ- յալ ներկա վիճակին: Լավ և վատ տրամադրության մեջ լինելը, մի բանով դրազված կամ չդրազված, գրգռված կամ խաղաղ և այլ վիճակ- ներում լինելը պատճառ է դառնում, վոր այս մոմենտում զուգորդման յեղակետն այս ինչ բանը դառնա և վոչ այն ինչ բանը:

Յեղակետի խնդիրը չի պարզում զուգորդման շղթաների ընթացքը, պետք է այժմ պարզել այն հարցը, թե ինչու մի յեղակետ հաջորդում են վորոշ տեսակի մտապատկերներ մի դեպքում, ուրիշ տեսակի մտա- պատկերներ մի այլ դեպքում: Այս խնդիրը պարզելու համար պետք է նշել այն, վոր հոգեկան ամեն մի բովանդակություն, որ «տունը» կապված է բազմաթիվ, նույնիսկ հարյուրավոր այլ բովանդակու- թյունների հետ. տուն—բակ, տուն—շուն, տուն—ճարտարապետ, տուն—կահ-կարասիք, տուն—աղյուս, տուն—տան նկար, տուն—մարդ և այլն:

Այժմ խնդիր է, թե յերբ «տուն» մտապատկերն արթնացավ մեր մեջ և յեղակետ է դառնալու զուգորդման շղթայի, նրան զուգորդված բող- մաթիվ մտապատկերներից վորը պետք է հաջորդի, վորովհետև մեր առօրյա փորձից հայտնի յե, վոր մի անգամ «տուն» մտապատկերն արթնացնում է ճարտարապետ և շինարարություն մտապատկերները, մի այլ անգամ կահ-կարասիքներ, մի ուրիշ անգամ մարդուներ, և այլն:

Մի յեղակետից զուգորդման այս և վոչ այլ ողակին և շղթային ենք անցնում հետևյալ պատճառներով:

ա) Յեղակետից անցնում ենք այն ողակին, վորը շատ ուժեղ և սերտ է կապված այդ յեղակետի հետ՝ սպափորության ուժեղության պատ- ճառով (որ «սպանություն» բանն արթնացնում է այն սպանության դեպքը, վոր մարդ առաջին անգամ տեսել է և ուժեղ ցնցվել):

բ) Յեղակետից այն ողակին ենք անցնում, վորը մոտ ժամանակում է կապվել յեղակետի հետ, նրանց կապը դեռ թարմ է ուժեղ է:

դ) Յերակեալից անցնում ենք այն ողակին, վորն ավելի ուժեղ և կարգաւ գգացմունքների հետ, քան մյուսները:

դ) Այն ողակին ենք անցնում, վորը յերակեալի հետ միասին հաճախ և կարգաւ ասորվել, նրանց միասին ասորվելը հաճախ և կրկնվել կրկնութունն ամբողջութեամբ և կարգաւ:

յե) Նայած թե յերակեալին հաջորդող ողակներն վորքան համարատասխան են մեր ներկա վիճակին, նայած թե մեր անցյալ փորձի վոր մասովն և զբարձրած մեր գիտակցութունն այժմ. որինակ, դասաստութունից առաջ և հետո հնչվող զանգի ձայնը տարբեր զուգորդումների պատճառ և դատնում: Միայն արտաքին գրգիռները չեն պարմանալորում մեր զուգորդումների ընթացքը, այլև ներքին սուբյեկտիվ վիճակները. այս յերկուսի փոխհարաբերութեամբ և պայմանավորված զուգորդման ընթացքը: Արտաքին գրգիռները, մեր որդանական և հոգեկան կարիքները—պահանջները, հակումները, վորոշումները, անցյալի փորձը—ասպիւրեցեցեաներն իրար վրա ազդելով՝ ուղղութուն են տալիս զուգորդման շղթաներին:

զ) Չուգորդման շղթաների ընթացքի վրա ազդում են նաև յեկեկա-գիտակից (անգիտակից) վիճակները, այսպէս կոչված զուգորդման «ննչված կոմպլեքսները»:

Մարդու վրա ազդող գրգիռները, ինչպէս և նրա ներքին վիճակները, սովորաբար արտահայտութուն են դառնում զանազան օճակներով միջոցով, բայց պատահում են նաև այնպիսիները, վորոնք հնարաւորութուն չունեն դուրս արտահայտելու շատ ներքին—ինտիմ բնույթ ունենալու կամ սոցիալական միջավայրին անհամարատասխան լինելու պատճառով, զբա համար դրանք դուրս մղված են լինում գիտակցութունից և մնում են յենթագիտակցի շրջանում և զբա համարել կոչվում են «ննչված կոմպլեքսներ»: Գիտակցութունից դուրս մղված այս կոմպլեքսները պատկերվում չեն մնում, թեև սրանք զբոյժված են նորմալ ձևով արտահայտելու հնարաւորութունից, բայց և այնպէս ազդում են գիտակից կյանքի և գիտակից սոցիալացիաների վրա: Որինակ, կրոնական մի մարդ կրոնի թունդ հակառակորդ և դատնում, վորովհետև իր նշանածի հետ ամուսնանում և մի ուրիշ ավելի թունդ կրոնական մարդ:

Կնատեցութունը հաճախ հետևանք և սիրո մեջ անհաջողութան և սեռական անբավարարվածութան: Ֆրիդրիխի մի վորոշ թերութուն անգիտակից կերպով ազդում և մարդու վարվեցողութան վրա: Այս ճնշված կոմպլեքսների ազդեցութան լուծ պատճառները մենք այսպատու և ենք գիտակցութունից դուրս վանել, վորովհետև պատկերվում չեն րե-

րում մեզ, ամաչում ենք շրջապատից և նրա տեղը դնում ենք ավելի պատվավոր և մեզ և շրջապատի համար ավելի լուրջ համարված պատճառներ (որ. կնատեցութան պատճառը համարում ենք մեր լուրջ ուսումնասիրութեան արդյունք, թեև նա անհաջողութան հետևանք է): Տեսնում ենք, վոր անգիտակից ճնշված, ինչպէս և ճնշված կոմպլեքսներն ազդում են մեր զուգորդումների ընթացքի վրա:

7. Պերսեպերացիա.

Յերբեմն մեզ հալածում է մի վորեկ յերգի մոտիվ, մի վորեկ նախադասութուն, վորեկ բառ կամ մտապատկեր: Սրանք առանց նկատելի պատճառի ու առիթի, առանց նկատելի զուգորդման ողակի արթնանում են գիտակցութան մեջ, մոռացվում, բայց շուտով ելի յեն արթնանում, նորից մոռացվում, այդ գրութունը յերբեմն տեսնում և բավական յերկար ժամանակ: Սրանք սոցիալատիվ կապերի մեջ չեն այն բոլորի հետ, ինչ տեղի յե ունեցել մեր գիտակցութան մեջ վորք ինչ առաջ կամ այժմ:

Նկատված և, վոր այնպիսի ասորումներն են ընդհանրապէս այսպիսի պերսեպերացիայի յենթարկվում, վորոնք սկզբնապէս ասորվել են ուժեղ, մեզ անհանգստացրել, հուզել, հետաքրքրել են:

Պետք է յենթադրել, վոր պերսեպերացիայի պատճառն աննկատելի, յենթագիտակից զուգորդումներ են և կամ ուղեղի մեջ տեղի ունեցող այս կամ այն մասի ուժեղ գրգռվածութունը, վորը կարող է հետևանք լինել արյան զեպել գլուխը դնացող հոսանքի ուժեղացման, ուղեղի ջերմութան, նյութերի փոխանակութան պրոցեսների փոփոխութան, թուլների ներգործութան և այլն:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՅԵՐ

1. Հիշողութուն

1. Հիշողութունը պայմանավորված է ուղեղի ի՞նչ տեսակ հակահիշներով:

2. Վորոնք են վերարտադրութան (վերհիշման) բովանդակութունների խեղաթյուրման պատճառները:

3. Ի՞նչ առանձնահատկութուններ ունի մանկան վերարտադրութունը:

4. Ի՞նչ էք հասկանում հիշողութան ծավալ, տեղութուն, արագութուն և բազմակողմանիութուն—միակողմանիութուն զազափարների տակ:

5. Վորո՞նք են հիշողութիւն տեսակները:

6. Ինչո՞վ են տարբերվում մեքենայական և տրամաբանական հիշողութիւնները:

7. Զարգացման ինչպիսի՞ աստիճաններ և կատարում մարդու հիշողութիւնը:

8. Ինչո՞ւ յենք ասում, վոր մոռացումը բնական և անհրաժեշտ յերևոյթ է:

9. Ինչպե՞ս պետք է սովորել մի բան այդ բանը յերկար հիշելու համար:

II. Աստղիացիա

1. Ի՞նչ է նշանակում առնթերութիւն գուգորդումն. նույն ժամանակում տեղի ունեցող պրոցեսներն ինչպե՞ս են ազդում իրար վրա: Միայն նույն ժամանակում տեղի ունեցող պրոցեսներն են իրար հետ գուգորդվում:

2. Ի՞նչ տեսակ գուգորդմամբ է բացատրվում սովորութիւնը և ինչ առավելութիւններ ունի:

3. Մտավոր ի՞նչ տեսակ աշխատանքներ են տեղի ունենում նմանութիւն գուգորդման ոգնութիւնամբ:

4. Ինչպե՞ս բացատրել կոնտրաստի յերևոյթը:

5. Ինչպե՞ս սպացուցել յենթադրատակից աստղիացիաների գոյութիւնը:

6. Ի՞նչ է նշանակում արտաքին և ներքին, ազատ և պայմանավորված գուգորդումներ:

7. Ի՞նչ պայմաններ են ազդում, վոր մի բան գուգորդման յելակետ դառնա և ի՞նչ պայմաններ են ազդում գուգորդման շղթայի ընթացքի վրա: Բացատրել պերսեպերացիայի յերևոյթը:

Գրավոր պատասխանել հետևյալ հարցերին

1. Նկարագրեցե՛ք ձեր կամ ձեր ծանոթներից մեկի հիշողութիւն հատկանիշները (ցանկայի յե պարզ փորձեր կատարելը):

2. Մի նյութ ինչպե՛ս կսովորեցնե՛ք ձեր աշակերտին, վոր նա հեշտ հասկանա և յերկար ժամանակ մարում պահի:

3. Վերջրե՛ք մի փոքր հոգված և ցոյց տվե՛ք, թե մտերն ինչպե՛ս են հաջորդում առնթերութիւն և նմանութիւն գուգորդման տեսակետներից կամ ինքնուրույն որինակներ մտածե՛ք:



362.

15
—
5-16